

**Ռ. Կ. ՍԱԶԱՊԵՏՈՅԱՆ**, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004, 231 էջ:

Բառը համարվում է լեզվական հիմնական միավոր, որովհետև բառերի միջոցով ենք մենք ձևավորում մեր մտքերը, արտահայտում մեզ ծանոթ իրողությունները: Ուստի բառերի ուսումնասիրությունը, լեզվական խնդիր լինելուց բացի, ինչ-որ չափով հոգեբանական, մշակութային, պատմական, կենցաղային և այլ իրողությունների ուսումնասիրություն է: Հայտնի է, որ լեզվի բառապաշարն արտացոլում է տվյալ լեզվով խոսող հանրության լեզվամտածողությունը, իսկ հայերենի բառապաշարն ունի մի առանձնահատկություն ևս: Պատմական և լեզվական հանգամանքների բերումով արդի հայերենն ունի գրական երկու ճյուղ՝ արևելահայերեն և արևմտահայերեն, որոնց բառապաշարում գոյություն ունեն մանություններ ու տարբերություններ: Այս հարցի քննությանն է նվիրված Ռուբեն Սաքապետյանի «Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները» ուսումնասիրությունը, որում առաջին անգամ հանգամանորեն քննվում ու լուսարանվում են մեր լեզվի երկու ճյուղերի բառապաշարային հատկանիշները: Բառական նյութն իհարկե այս կամ այն չափով մինչ այդ ներկայացված էր տարբեր բառարաններում, որոնց թվում է նաև հենց Ռ. Սաքապետյանի՝ շուրջ 16000 բառ և դարձվածային միավոր պարունակող «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարանը»: Տեսական շատ խընդիրներ էլ ուսումնասիրված ու ներկայացված են մի շարք գրքերում, սակայն հարցն ամբողջությամբ քննված չէր, և շատ իրողություններ կարող էին տեսական մեկնաբանության ու դասակարգումների:

«Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները» աշխատության մեջ հանգա-

մանորեն ուսումնասիրված ու ներկայացված են բառապաշարային այն մանություններն ու առավելապես տարբերությունները, որոնք առկա են մեր լեզվի ճյուղերի միջև: Զննված են նաև հարակից հարցեր, մասնավորապես արտասանական, ուղղագրական, ուղղախոսական այն իրողությունները, որոնք սերտորեն առնչվում են բառապաշարին և առաջ քերում որոշակի յուրօրինակություններ:

Գրքի ներածական մասը նվիրված է պատմական և լեզվական հանգամանքներին, այսինքն՝ լեզվական և արտալեզվական գործոններին, ինչպես նաև հարցին վերաբերող տեսական գրականության քննությանը: Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է Ա. Այսերմյանի, Հր. Աճառյանի, Մ. Աբելյանի, Գ. Ջահուկյանի, Էդ. Աղայանի, Ա. Սարգսյանի և այլոց կարծիքներին, վերլուծում դրանք և հավելում մի շարք նոր փաստեր, կատարում նոր դասակարգումներ: Գրքի այս բաժնում խոսվում է նաև այն սկզբունքների մասին, որոնցով գրված է մենագրությունը: Այնուհետև առաջին գլխում քննված են արևելահայերեն-արևմտահայերեն ուղղագրական-ուղղախոսական տարբերություններ ունեցող բառերը (օրինակ՝ *հայելազարդ-հայելիազարդ*, *բջջային-բջիջային*, *իշուկ-էշուկ* և այլն): Այսպիսի տարբերությունները հընչյունական տարբեր երևույթների հետևանք են, որոնք էլ համապատասխան օրինակներով հերթով ներկայացվում են: Երկրորդ գլխում քննվում են միայն արևմտահայերենի բնորոշ բառերը: Այստեղ կատարված է մանրագին ուսումնասիրություն, և բառերն առանձնացված են տարբեր խմբերի՝ կոդնական-եկեղեցական և ծիսական բառեր, ծիսական-ազգագրական իմաստներով բառեր, ընտանեկան հարաբերություններ անվանող բառեր, կրթական բնագավառի

քառեր, պատմական արժեք ունեցող քառեր և այլն: Ընդհանուր առմամբ առանձնացված է տասնյոթ խումբ, որը, կարծում ենք, ցույց է տալիս, թե ինչ հանգամանորեն են դրանք ներկայացված: Ուշագրավ է, որ ոչ միայն առանձնացվում են այս խմբերը և ներկայացվում լեզվական յուրահատկությունները, այլև շատ դեպքերում նշվում են արտալեզվական գործոնները՝ պատմական, մշակութային, կենցաղային և այն մյուս իրողությունները, որոնք ազդեցություն են ունեցել այս հարցում: Երրորդ գլուխը կոչվում է «Սիւնույն քառածկի արտահայտած տարբեր իմաստները արևելահայերենում և արևմտահայերենում»: Այստեղ բերված բառերն էական դեր ունեն երկու գրականները ճիշտ հասկանալու համար, օրինակ՝ *ախոյան* արևելահայերենում նշանակում է *հակառակորդ*, արևմտահայերենում՝ *չնմայիտն*, *լաթ* արևելահայերենում նշանակում է *փայտ*, արևմտահայերենում՝ *զգեստ* և այլն: Այսպիսի բառերի մի մասն ունի նաև խոսքիմասային տարբերություն, օրինակ՝ *ազգային* բառն արևելահայերենում նշանակում է *ազգին վերաբերող* և ածական է, իսկ արևմտահայերենում նշանակում է *ազգային-քաղաքական գործիչ* և գոյական է, *գրագետ* արևելահայերենում նշանակում է *գրածանաչ* և ածական է, իսկ արևմտահայերենում նշանակում է *գրականությունը գրադոկ մարդ* և գոյական է:

Չորրորդ գլխում ներկայացված են արևելահայերեն-արևմտահայերեն բառակազմական տարբերակները: Այս բառերը կազմված են բառակազմական տարբեր բաղադրիչներով կամ տարբեր կաղապարներով, ինչպես՝ *ազգահամար-մարդահամար*, *անձնական-ինքնական*, *աչքառու-ակնառու*, *գրածախ-գրավածառ* և այլն (առաջինը գրված էին արևմտահայերեն բառերը): Հինգերորդ գլխում բերված են օտար բառերի դիմաց արևմտահայերենում գոյություն ունեցող հայերեն բառերը, օրինակ՝ *ակորդ-դաշնուրդ*, *դիվերսանտ-խափանարար*, *սպեկուլյանտ-շահադես* և այլն: Վեցերորդ գլխում քննված են բառարանագրությանը վերաբերող հարցեր, որոնք լուսաբանում են արևելահայերենի և

արևմտահայերենի բառապաշարների արտացոլումը բառարաններում: Գրքի վերջում խոսվում է նաև արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման խնդիրների մասին, ինչպես նաև բերվում են ընդարձակ բառացանկեր: Մեր լեզվի երկու գրական ճյուղերի մերձեցման հարցերի քննությունն այս գրքում կարևորվում է նաև նրանով, որ մինչև այժմ եղած մերձեցումները եղել են հենց բառապաշարային մակարդակում: Այստեղ հեղինակը նշում է բառային տարբերակները, հաջող և անհաջող կազմությունները և գտնում, որ կան երկու գրականների փոխադարձ հարստացման լայն հեռանկարներ:

Աշխատության մեջ կատարվել են մի շարք տեսական նորամուծություններ, որոնցից կարելի է նշել արևելահայերեն-արևմտահայերեն բառապաշարային տարբերությունների հստակ դասակարգումը, դրանց հետագա փոխհարստացման ուղիները, հնչյունափոխական մի շարք երևույթներ՝ մասնավորապես *n-r* հակադրության չեզոքացումը արևմտահայերենի արտասանության պլանում, փոխազդեցական հնչյունափոխության հետևանքով պարզ խոլերի առկայությունը որպես հրնչային արժեք չներկայացնող միավորներ, *ե* հողակապի առաջացման լրացուցիչ հիմնավորումները: Վերջապես, հսկայական քանակությամբ լեզվական նոր նյութ է դրվում շրջանառության մեջ, որով այս աշխատանքը կարող է դառնալ սկզբնաղբյուր հետագա ուսումնասիրությունների համար:

Ինչպես երևում է գրքի այս մասնակի ներկայացումից, Ռուբեն Սաքսպետոյանի «Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները» մենագրությունը ուշագրավ և արժեքավոր աշխատություն է. այն ունի թե՛ գիտական, թե՛ ազգային, թե՛ մշակութային նշանակություն և մեծ չափով կօգնի ոչ միայն լեզվաբաններին, այլև ուրիշ բնագավառների մասնագետներին. մասնավորապես գրքում կան մի շարք բառեր, որոնք կարող են էապես նպաստել տերմինաստեղծման աշխատանքներին:

Ա. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ